1.5. ԿԻՊՐՈՍԻ ՎԵՐԵԼՔԻ ՈՒՂԻՆ

ԱՐՄԻՆԵ ԶԱԽԱՐՅԱՆ
14.06.2021-20.09.2021

Ներածություն

Համաշխարհային տնտեսությունում Կիպրոսը հայտնի է զարգացած արդյունաբերությամբ, զբոսաշրջությամբ, գյուղատնտեսությամբ, գինեգործությամբ և արհեստագործությամբ: Զարգացած են արդյունաբերության հանքարդյունահանող (պղինձ, քրոմ, երկաթ) և գյուղատնտեսական հումք վերամշակող (ծխախոտ, գինի, մրգի պահածոներ և այլն) ճյուղերը: Առկա է նաև տնայնագործական և արհեստագործական արտադրություն (գորգեր, ձեռագործ, խեցեղեն): Մշակվում են ցորեն, գարի, ընդեղեն, բոստանային բույսեր, խաղող, ցիտրուսներ, ծխախոտ, նշենի: Կան ձիթենու և ընկուզենու պուրակներ: Զարգացած է նաև շերամապահությունը, ափամերձ շրջաններում՝ ձկնորսությունը:

Ժամանակակից տնտեսական պայմաններում Հայաստանի Հանրապետության համար հատկապես կարևորվում է արտասահմանյան երկրների տնտեսությունների զարգացման առաջավոր փորձի ուսումնասիրությունն ու արդյունավետ կիրառումը: Հատուկ ուշադրության է արժանի այն երկրների փորձը, որոնք պատմական, աշխարհաքաղաքական և մշակութային տեսանկյուններից որոշակի ընդհանրություններ ունեն մեր երկրի հետ: Այս համատեքստում որոշակիորեն կարևորվում է Կիպրոսի տնտեսության զարգացման փորձի ուսումնասիրությունը, ինչն էլ պայմանավորում է մեր հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակն է Կիպրոսի տնտեսական փորձի ուսումնասիրության միջոցով Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներուժի արդյունավետ կիրառման եղանակների բացահայտումը: Հետազոտության խնդիրն է Կիպրոսի տնտեսության զարգացման մեխանիզմների վերլուծության արդյունքների հիման վրա ՀՀ տնտեսության զարգացման հնարավոր ուղիների մշակումը:

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման կարևորագույն ուղղություններն են տեղեկատվական տեխնոլոգիաները, գյուղատնտեսությունը, ռազմաարդյունաբերությունը, քիմիական արդյունաբերությունը և զբոսաշրջությունը: Նշված ոլորտներում Կիպրոսի հաջողված փորձը կարող է օգտակար լինել նաև Հայաստանի Հանրապետության համար: Առանձնահատուկ ուշադրության է արժանի նաև Կիպրոսի հակաճգնաժամային քաղաքականության իրականացման փորձը՝ տնտեսական և քաղաքական բազմաթիվ մարտահրավերների և հիմնախնդիրների հաղթահարման շեշտադրմամբ:

Հոդվածում մանրամասնորեն դիտարկվել է Կիպրոսի տնտեսության զարգացման փորձը: Առանձնահատուկ ուշադրություն է հատկացվել արդյունաբերության, գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտների զարգացման առանձնահատկություններին, ինչպես նաև վերլուծվել են Կիպրոսի 2014-2020 թթ. հիմնական տնտեսական ցուցանիշները: Այնուամենայնիվ, ելնելով հոդվածի ծավալների սահմանափակության հանգամանքից, ինչպես նաև դիտարկվող հիմնախնդիրների բազմազանությունից, կարծում ենք, որ հետազոտությունը կշարունակվի նաև մեր հետագա աշխատանքներում:

Գրականության ակնարկ

Կիպրոսի տնտեսության զարգացման պատմական փորձը ներկայացվել է մի շարք աշխատություններում: Մասնավորապես՝ Կիպրոսի տնտեսության զարգացման հիմնական միտումները մանրամասնորեն ներկայացված են Յու. Կվաշնինի հետազոտությունում[1]: Հեղինակը ներկայացրել է Կիպրոսում օտարերկրյա կապիտալի ներգրավման առանձնահատկությունները, հայրենական և օտարերկրյա ներդրողների գործունեության հարկային խթանման միջոցները, ինչպես նաև պետական տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնական ուղիները: Տնտեսության ինովացիոն զարգացման խթանման նպատակով տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտին պատկանող փոքր և միջին ձեռնարկությունների համար Կիպրոսում ստեղծվել են ներդրումների ներգրավման արտոնյալ պայմաններ: Բարենպաստ հարկային ռեժիմի, գործարքների գաղտնիության, շահավետ աշխարհագրական դիրքի, դյուրացված վիզային ռեժիմի և մի շարք այլ առավելությունների շնորհիվ զգալիորեն մեծացել է Կիպրոսի ներդրումային գրավչության մակարդակը (հատկապես Արևելյան Եվրոպայի երկրների համար):

Հեղինակի մեկ այլ հետազոտությունում[2] ներկայացված է Կիպրոսի 2013 թվականի ֆինանսական ճգնաժամը. դիտարկվում են ճգնաժամի առաջացման պատճառները, ինչպես նաև գնահատվում է ճգնաժամային կառավարման արդյունավետությունը: Մանրամասնորեն ուսումնասիրվել են Կիպրոսի բանկային համակարգի թուլացմանը նպաստող գործոնները, ներկայացվել են Կիպրոսի տնտեսության առողջացմանն ուղղված պետական հակաճգնաժամային ծրագրերը, ինչպես նաև վերլուծվել են Կիպրոսի, ԵՄ-ի և Ռուսաստանի տնտեսությունների համար ճգնաժամի հնարավոր հետևանքները:

Հետազոտության մեթոդաբանություն

Հետազոտության համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել մակրո և միկրոտնտեսագիտության, կառավարման, միջազգային տնտեսական հա-

[1] Квашнин Ю. Д., Республика Кипр как перевалочная база для иностранного капитала. Контуры глобальных трансформаций: политика, экономика, право, 2018, том 11 (1) , стр. 170- 184.

[2] Квашнин Ю.Д., Банковский кризис в республике Кипр // Год планеты. 2013. Ежегодник, с. 305-315.

բաբերություններին առնչվող աշխատությունները, տնտեսության տարբեր ոլորտների զարգացման խթանման հիմնախնդիրները լուսաբանող հայրենական և արտասահմանյան հեղինակային հրապարակումները, գիտաժողովների հրապարակած նյութերը, դիտարկվող ոլորտների գործառույթները և փոխհարաբերությունները կանոնակարգող նորմատիվ բնույթի իրավական ակտերը և այլն:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային և իրավիճակային վերլուծության, տնտեսավիճակագրական խմբավորումների, ինդուկցիայի և դեդուկցիայի, համեմատական և գործոնային վերլուծությունների և գիտական աբստրահման մեթոդները:

Վերլուծություն

Ժամանակակից Կիպրոսը՝ որպես պետություն, իր պատմությունը սկսել է 1960 թվականից՝ Ցյուրիխ-Լոնդոնյան համաձայնագրով Կիպրոսի անկախության երաշխավորների միջև (Հունաստան, Անգլիա, Թուրքիա) Կիպրոսի անկախության ճանաչման արդյունքում[1]:

Կիպրոսի տարածքը 9 240 քառ. կմ է, այն գտնվում է Միջերկրական ծովի երրորդ ամենամեծ համանուն կղզում: Մայրաքաղաքը Նիկոսիան է: Այն սահմանակից է Սիրիայի, Թուրքիայի, Եգիպտոսի և Հունաստանի հետ: 2020 թ. Կիպրոսի բնակչությունը կազմել է 1 207 361 մարդ: Բնակչության շուրջ 80 % -ը ուղղափառ է[2]: Կիպրոսի բնակչության մեծամասնությունը (մոտ 80 %) հույներ են, որոնց նախնիներն այստեղ բնակություն են հաստատել ավելի քան 3 հազար տարի առաջ, 18 %-ը թուրքեր են, որոնք այստեղ մուտք են գործել XVI դարում: Հունաստանի հետ հույն-կիպրացիների միավորմանը շարունակաբար խոչընդոտել է կղզու փոքրաթիվ թուրքական համայնքը[3]:

1974 թվականից Կիպրոսի տարածքը բաժանված է երկու մասի՝ հունական (հարավում) և թուրքական (հյուսիսում): Տարածքների միջև գոյություն ունի «կանաչ գիծ», որի երկայնքով հերթապահում են ՄԱԿ-ի զորքերը: Ներկայում Կիպրոսը անկախ ինքնիշխան հանրապետություն է՝ կառավարման նախագահական ձևով:

Ինչպես հայտնի է, 1489-1571 թվականներին Կիպրոսը պատկանել է Վենետիկին: 1571 թվականին այն նվաճել են թուրքերը: 19-րդ դարում Կիպրոսում սկիզբ է առել Հունաստանի հետ միավորվելու շարժումը: 1878 թ. անգլո-թուրքական գաղտնի համաձայնագրով Անգլիան օկուպացրել էր Կիպրոսը, 1914 թ.՝ բռնակցել: 1925 թվականից Կիպրոսը անգլիական գաղութ էր: 1926 թ. ստեղծված Կիպրոսի Կոմկուսը գլխավորել է աշխատավորների ազգային-ազատագրական շարժումը, որը հատկապես ուժեղացավ Երկրորդ համաշ-

[1] История переговорного процесса об объединении Кипра, https://tass.ru/info/2247300

[2] Кипр, https://knoema.ru/atlas/%d0%9a%d0%b8%d0%bf%d1%80

[3] Кипр, https://knoema.ru/atlas/%d0%9a%d0%b8%d0%bf%d1%80

խարհային պատերազմից հետո: 1955 թվականին Կիպրոսում մտցվեց արտակարգ դրություն, արգելվեց Կիպրոսի աշխատավոր ուժի առաջադիմական կուսակցության գործունեությունը: Սակայն Կիպրոսի ժողովրդի չդադարող պայքարը գաղութարարներին ստիպեց բանակցություններ սկսել Կիպրոսին անկախություն տալու շուրջ: 1959 թ. Ցյուրիխ-Լոնդոնյան համաձայնագրով Կիպրոսի անկախության երաշխավորների միջև (Հունաստան, Անգլիա, Թուրքիա) ճանաչվեց Կիպրոսի անկախության իրավունքը, բայց Անգլիան ստացավ կղզում ռազմական բազաներ (Ակրոտիրի և Դեկելիա) ունենալու, իսկ Հունաստանը և Թուրքիան՝ զորամասեր պահելու արտոնություն: 1960 թ. օգոստոսին դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին Կիպրոսի և Խորհրդային Միության միջև, սեպտեմբերին Կիպրոսը դարձավ ՄԱԿ-ի անդամ: Կիպրոսի առաջին նախագահ Մակարիոս III-ի կառավարությունը հռչակեց «դրական չեզոքություն» և բոլոր երկրների հետ բարեկամական կապեր զարգացնելու քաղաքականություն: 1963 թ. զինված ընդհարում սկսվեց հունական և թուրքական համայնքների միջև, որի հետևանքով երկրում սկիզբ առավ քաղաքական սուր ճգնաժամ: 1964 թ. կղզի մտցվեցին ՄԱԿ-ի զորքերը: 1974 թ. հուլիսին հունական զինվորականությունն ու ներքին այլ ուժեր խռովություն բարձրացրին կառավարության դեմ՝ պահանջելով կղզին միացնել Հունաստանին: Դրան հաջորդեց թուրքական զորքերի ներխուժումը կղզի, և թուրքերը 1974 թ. հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում զավթեցին Կիպրոսի տարածքի մոտ 40 %-ը (հյուսիսում): 1975 թ. փետրվարին կղզու թուրքական համայնքի ղեկավարությունը միակողմանիորեն հայտարարեց Կիպրոսի թուրքական դաշնային պետություն ստեղծելու մասին, որն ավելի սրեց դրությունը կղզում և նոր դժվարություններ հարուցեց Կիպրոսյան հարցի լուծման ճանապարհին[1]: Կիպրոսի միավորման շուրջ բանակցային գործընթացը շարունակվում է[2]:

Կիպրոսի տնտեսությունը չնայած փոքր է, սակայն շատ ճկուն է և առողջ՝ դրսևորելով իրեն որպես արագ հարմարվող և ճիշտ ուղղությամբ հնարավորինս կարճ ժամկետներում վերափոխվող համակարգ: Ներկայում այն բնութագրվում է համախառն ներքին արդյունքի բավարար աճի տեմպերով՝ միջինը 3,1 %, զբաղվածության բարձր մակարդակով, ինչպես նաև ներքին և արտաքին մակրոտնտեսական որոշակի կայունությամբ: Արդյունքում Կիպրոսը հասավ մերձեցման նախանձելի մակարդակի առաջադեմ տնտեսությունների հետ: 2020 թ. Կիպրոսը ՏՀԶԿ անդամ երկրների շարքում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշով զբաղեցնում էր 30-րդ տեղը՝ առաջ անցնելով Հունաստանից և Թուրքիայից: ՀՆԱ աճը Կիպրոսում 2019 թ. կազմել է 3,1 %, իսկ 2020 թ.՝ -5.1, ինչը մեծապես պայմանավորված է Covid-19 համավարակով: Նկատենք նաև, որ Կիպրոսի տնտեսական հաջողությունները հիմնականում

[1] Կիպրոս, https://hy.wikipedia.org/wiki/%D4%BF%D5%AB%D5%BA%D6%80%D5%B8%D5%BD

[2] История переговорного процесса об объединении Кипра, https://tass.ru/info/2247300

ձեռք են բերվում կղզու հունական հատվածի տնտեսության զարգացման միջոցով:

Կիպրոսի տնտեսության հիմնական բնութագրերն են[1].

1. ***մասնավոր հատվածի գերիշխող դերը արտադրության ոլորտում:*** Պետության հիմնական նպատակներն են՝ մակրոտնտեսական կայունության և բարենպաստ գործարար միջավայրի պայմանների պահպանումը, անհրաժեշտ օրենսդրահիրավական դաշտի ձևավորումը, արդար մրցակցության պայմանների ապահովումը, ժամանակակից տնտեսական և սոցիալական կառուցվածքի ստեղծումը, սոցիալական համախմբվածության պայմանների ապահովումը:

2. ***Ներքին շուկայի փոքր չափերը:*** Վերջինս արտադրության աճի և միջճյուղային հարաբերությունների զարգացման անբարենպաստ գործոն է:

3. ***Ձեռնարկությունների փոքր չափերը:*** Կիպրոսի ընկերություններում աշխատողների թիվը շատ փոքր է՝ միջինը 4.4 մարդ: Ձեռնարկությունների ընդհանուր թվի կեսից ավելիում (58 %) աշխատում է մեկից ավելի մարդ: Միկրոձեռնարկությունները, որոնցում աշխատում է 10-ից պակաս մարդ, կազմում են Կիպրոսի ձեռնարկությունների ընդհանուր թվի 95 %-ը, փոքր ձեռնարկությունները (10-49 աշխատակիցներ)՝ 4 %-ը, միջին ձեռնարկությունները (50-249 աշխատակից)՝ 0.7 %, խոշոր ձեռնարկությունները (250 մարդուց սկսած)՝ 0.1 %-ը:

4. ***Աշխատուժի փոքր քանակը:*** Կիպրոսի փոքրաթիվ բնակչությունը ստեղծում է որոշակի անհավասարակշռություններ աշխատաշուկայում: Քանակական և որակական անհամապատասխանություններն ակնհայտ են տնտեսության բոլոր ոլորտներում, ինչը փոխհատուցվում է արտաքին վարձու աշխատուժով: Անհամապատասխանություններն ավելի ակնհայտ են հյուրանոցային հատվածում, ինչպես նաև շինարարության, գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտներում, մինչդեռ մասնագիտական մակարդակում աշխատակազմի պակաս չկա:

5. ***Տնտեսության բացությունը:*** Կիպրոսում առկա է ապրանքների և ծառայությունների ազատ ներմուծման և արտահանման հնարավորություն:

6. ***Ծառայությունների ոլորտի գերակշռող դերն ու աճող նշանակությունը*** (ՀՆԱ-ի մոտ 71.5 % -ը):

7. ***Զբոսաշրջության ոլորտից մասնակի կախվածությունը:*** Տնտեսության արտադրության ոլորտն ապահովում է ՀՆԱ-ի մոտ 15-20 %-ը:

Կիպրոսի կառավարության կողմից իրականացվող քաղաքականության հիմնական նպատակն է՝ երկիրը վերածել Արևելյան Միջերկրական ծովի առևտրա-ֆինանսական և տուրիստական կենտրոնի: Տնտեսական քաղաքա-

[1] Экономика Кипра: промышленность, сельское хозяйство, торговля, http://www.gecont.ru/articles/econ/ciprus.htm

կանության ամենակարևոր խնդիրներից մեկը օտարերկրյա ներդրումների ներգրավումն է:

Ներկայացնենք Կիպրոսի տնտեսության զարգացման վիճակն ըստ առանձին ճյուղերի[1]:

- ***Արդյունաբերություն***: Անկախության տարիներին Կիպրոսը մեծ առաջընթաց է գրանցել արդյունաբերական զարգացման մեջ: Կղզում ստեղծվել է բազմաճյուղ մշակող արդյունաբերություն, որն արտադրում է ներքին և արտաքին շուկաներում մեծ պահանջարկ վայելող որակյալ արտադրանքներ: Ներկայումս կառավարությունը քայլեր է ձեռնարկում բարձր տեխնոլոգիաներն արդյունաբերություն ներմուծելու ուղղությամբ՝ ստեղծելով այսպես կոչված «ինկուբատորներ» և հիմնադրելով նոր տեխնոլոգիաների զարգացման գիտահետազոտական կենտրոն: Արդյունաբերությունը հիմնականում ներկայացված է արտահանմանն ուղղված ճյուղերով՝ հագուստ, տրիկոտաժ, կոշիկ, ծխախոտ: Արդյունաբերության հիմնական ոլորտներին են վերաբերում նաև սննդամթերքի, խմիչքների, կաշվե իրերի, մետաղական արտադրանքի, քիմիական և պլաստմասե արտադրանքի արտադրությունները: Սննդի արդյունաբերությունն արտադրում է բարձրորակ սննդամթերք՝ միս և կաթնամթերք, ձիթապտղի և այլ բուսական յուղեր, հաց և հրուշակեղեն, հյութեր, տարբեր բանջարեղենային պահածոներ, զովացուցիչ ըմպելիքներ, խաղողի բնական գինիներ, գարեջուր, տեքստիլ, լվացող միջոցներ, օծանելիք և կոսմետիկա, դեղամիջոցներ, ներկեր, ապակի, ստվարաթուղթ, ռետինե արտադրանքներ և այլն: Կղզում կան նաև հանքարդյունաբերության ոլորտին պատկանող ձեռնարկություններ. արդյունահանվում են պղինձ, քրոմ, ասբեստ, պիրիտներ: Կան նաև մարմարի և գիպսի հանքավայրեր: Մշակող արդյունաբերության ոլորտում գերակշռում են փոքր ձեռնարկությունները, որոնք կիրառում են կազմակերպման և կառավարման ժամանակակից մեթոդներ, արտադրում են ներքին և արտաքին շուկաներում պահանջարկ վայելող որակյալ ապրանքներ: Կիպրոսում կան ցեմենտի, կահույքի, որոշ տեսակի գյուղատնտեսական տեխնիկայի արտադրությամբ զբաղվող ձեռնարկություններ: Գործում է նավթավերամշակման գործարան:
- ***Գյուղատնտեսություն***: Կիպրոսը նախկինում հետամնաց ագրարային երկիր էր, որտեղ հողագործությունը տնտեսության հիմքն էր: Ներկայում հողագործությունը չունի իր նախկին առաջատար դերը, իսկ Կիպրոսի տնտեսության հիմքը ոչ արտադրական ոլորտն է: Այնուամենայնիվ, գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմում է մոտ 3.6 % և ապահովում է երկրի զբաղվածության 8.3 %-ը: Գյուղատնտեսությունը հաջողությամբ զարգանում է՝ չնայած այն հանգամանքին, որ առավել բերրի հողերը կենտրոնացած են կղզու հյուսիսում՝ Հյուսիսային Կիպրոսի տարածքում: Կղզու բնակիչ-

[1] Экономика Кипра: промышленность, сельское хозяйство, торговля, http://www.gecont.ru/articles/econ/ciprus.htm

ները մշակում են հողային տարածքների մոտ կեսը: Հիմնական մշակաբույսերն են ցորենը, գարին, վարսակը, լոբազգիները, բոստանային կուլտուրաները, կարտոֆիլը, խաղողը, ծխախոտը, նուշը, նուռը, ձիթապտուղը, ընկույզը և ցիտրուսային մրգերը: Կիպրոսում առավել զարգացած է խաղողագործությունը, Կիպրոսի գինիները հայտնի են ամբողջ աշխարհում, իսկ թարմ խաղողը առանձնանում է իր արտասովոր հյութեղությամբ և բույրով: Ներկայումս արտահանվող հիմնական գյուղմթերքներն են կարտոֆիլը, թարմ բանջարեղենը, պահածոյացված մրգերը, մրգահյութերը, ցիտրուսային մրգերը, թարմ խաղողը, կաթնամթերքը, գինիները և ոգելից խմիչքները: Լեռնային շրջաններում զարգացած է նաև անասնապահությունը՝ ոչխարներ, այծեր, խոզեր, խոշոր եղջերավոր անասուններ, ընտանի թռչուններ և ջայլամներ: Կղզում զարգացած է նաև ձկնաբուծությունը, որն առաջացել է առափնյա և ցանցային ձկնորսության արդյունքում, ինչպես նաև բնական պայմաններում ծովային ձկների բուծմամբ: Կիպրոսի ծովային ջրերում ձկների քանակական պակասը մասամբ փոխհատուցվում է նրանց տեսակների բազմազանությամբ: 1960 թ. անկախությունից հետո ամբողջ Կիպրոսում կառուցվել են նաև արհեստական ջրամբարներ:

- ***Զբոսաշրջություն:*** Կիպրոսում զբոսաշրջությունը տնտեսության առանցքային ոլորտներից մեկն է: Տարեկան Կիպրոս է այցելում մոտ 4 միլիոն զբոսաշրջիկ: 1975 թվականից Կիպրոսը դարձել է Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության լիիրավ անդամ: Զբոսաշրջությունը Կիպրոսի պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրներից մեկն է: Տեղական զբոսաշրջության արդյունաբերությունը տուժում է բարձր գործառնական ծախսերից և հանգստացողների որոշ կատեգորիաների համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունից: Այդ պատճառով Կիպրոսի իշխանությունները փորձում են զարգացնել ձմեռային և կրոնական զբոսաշրջությունը: Կրոնական զբոսաշրջության զարգացման նպատակով 2006 թ. Նիկոսիայում տեղի ունեցավ Կրոնական զբոսաշրջության 1-ին միջազգային համաժողովը, որը կազմակերպել էին Կիպրոսի զբոսաշրջության կազմակերպությունը, Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպությունը և Կիպրոսի ուղղափառ եկեղեցին:

Կիպրոսը մի շարք միջազգային կազմակերպությունների (WTO, IMF, EBRD, UNESCO, UNIDO, WHO, FAO, IFAD, ILO, ICAO, ITU, WIPO, WMO, IAEA, IBRD, IFC, IDA, OSCE) անդամ է[1], ինչը հնարավորություն է ընձեռում ընդլայնել իր քաղաքական և տնտեսական դիրքն ու ազդեցությունը աշխարհում, հատկապես Միջերկրածովյան-Բալկանյան տարածաշրջանում: Կիպրոսը ակտիվ է նաև ՄԱԿ-ում, հատկապես ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովում (UNECE): 1961 թվականից Կիպրոսը Եվրոպայի

[1] Кипр / Участие в международных организациях, основные внешнеполитические контрагенты и партнёры, отношения с Россией, http://www.hyno.ru/tom1/876.html

խորհրդի անդամ պետություն է: Երկիրը մասնակցում է նաև Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (OSCE) աշխատանքներին և կառուցողականորեն դեմ է բոլոր զինված բախումներին:

Կիպրոսի արտաքին քաղաքականության ամենակարևոր գերակայությունը Եվրամիությանն անդամակցությունն է: Երկիրը Եվրամիությանը միացավ 2004 թվականին, ինչի արդյունքում Կիպրոսի կառավարությունը պարտավորություն ստանձնեց անդամակցել Տնտեսական և արժութային միությանը՝ այդպիսով դառնալով Եվրոգոտու լիիրավ անդամ: ԵՄ ընդլայնմանն աջակցությունը Կիպրոսի քաղաքականության հիմնական բաղադրիչներից է: Միաժամանակ Կիպրոսը ներգրավված է նաև Եվրահանձնաժողովի աշխատանքներում:

Կիպրոսը ավանդական սերտ կապեր ունի Հունաստանի հետ: Կիպրոսի և Հունաստանի Հանրապետությունների կառավարությունները ստեղծել են համատեղ հանձնաժողով, որը գլխավորում են արտաքին գործերի նախարարները՝ տեղեկատվության փոխանակման և քաղաքականության համակարգման համար՝ այդպիսով նվազեցնելով միջազգային լարվածությունը: 1993 թվականից ի վեր կյանքի է կոչվել Հունաստանի և Կիպրոսի «միասնական պաշտպանական տարածության» մասին դոկտրինը (պաշտոնապես չձևակերպված), որը նախատեսում է երկու երկրների համատեղ ջանքերը պաշտպանության ոլորտում:

Կիպրոսի դրամական միավորը եվրոն է: Երկրի միացումը Եվրամիությանը հանգեցրեց տեղական հարկային համակարգի վերակառուցմանը՝ ԵՄ կանոնակարգերին համապատասխան: Արդյունքում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ընկերությունների հարկային ռեժիմները նույնականացվեցին: Տարեկան ավելի քան 183 օր Կիպրոսում գտնվող ֆիզիկական անձը համարվում է երկրի հարկային ռեզիդենտ: Ընկերությունը համարվում է Կիպրոսի հարկային ռեզիդենտ, եթե նրա գործունեությունը վերահսկվում է Կիպրոսի պետական մարմինների կողմից: Կիպրական ընկերությունների շահույթը հարկվում է կորպորատիվ շահութահարկով՝ 10 %, ինչը Եվրամիությունում կորպորատիվ հարկերի ամենացածր դրույքն է: Արժեթղթերի վաճառքից ստացված և ոչ ռեզիդենտ ընկերություններին վճարված շահաբաժինները, տոկոսները, հոնորարները և շահույթը ենթակա չեն հարկման:

Ինչպես հայտնի է, Կիպրոսի տնտեսությունը լուրջ անկում ապրեց 1974 թ. թուրքական ներխուժումից հետո, որին, սակայն, հաջորդեց ***Կիպրոսյան վերելքը***՝ շնորհիվ երկրի կառավարության գրագետ և հավասարակշռված տնտեսական քաղաքականության իրագործման[1]: 1974 թ. թուրքական ներխուժումից հետո կղզու ֆինանսատնտեսական առաջընթացը կտրուկ կանգ առավ: Երկրի եկամուտները գործնականում իջել էին զրոյական մա-

[1] Кипр: экономическое чудо после событий 1974 года, https://www.cyprusrussianbusiness.com /index.php/articles /5283-kipr-ekonomicheskoe-chudo-posle-sobytij-1974-goda

կարդակի: Կիպրոսը կորցրեց իր նավահանգիստը և օդանավակայանը, սակայն իշխանություններին այս պայմաններում հաջողվեց ոչ միայն երկիրը փրկել լիակատար փլուզումից, այլև աշխուժացնել տնտեսությունը: Թուրքիայի զինված ուժերի «Աթիլա» գործողությունը սկսվել է 1974 թ. հուլիսի 20-ի առավոտյան: Թուրքական իշխանությունները կղզում իջեցրին 30 հազարանոց զինվորական կորպուս: Մի քանի շաբաթվա ընթացքում զորքերը գրավեցին Կիպրոսի տարածքի 37 %-ը: Արդյունքում 160 հազար կիպրացի հույներ ստիպված եղան փախչել գրավյալ տարածքներից: Այս իրադարձություններից հետո Կիպրոսի ՀՆԱ-ն նվազեց 7,7 %-ով, իսկ 1975 թ.՝ արդեն 15,6 %-ով: 1977 թ. գյուղատնտեսական հողերի 80 %-ը, որտեղ աճեցվում էին ցիտրուսային մրգեր և ծխախոտ (հիմնական արտահանման նպատակով), հայտնվեցին գրավյալ տարածքներում, ինչը հանգեցրեց գյուղատնտեսական արտադրանքի ծավալների նվազմանը 50 %-ով: Ֆամագուստայի նավահանգիստը, որտեղով անցնում էր երկրի առևտրի 80 %-ը, նույնպես հայտնվեց գրավյալ տարածքներում: Կիպրոսը կորցրեց նաև իր միջազգային օդանավակայանը և 1974 թ. հուլիսից մինչև 1975 թ. փետրվարն ընկած ժամանակահատվածում պարզապես մեկուսացավ արտաքին աշխարհից՝ օդային հաղորդակցության բացակայության պատճառով: Օկուպացված Կերինիային և Ֆամագուստային բաժին էր ընկնում զբոսաշրջության ոլորտի մոտ 70 %-ը: Միաժամանակ, օկուպացված տարածքներից փախստականների թիվը հասնում էր 200 000-ի, իսկ գործազրկության մակարդակը՝ 35 %-ի: 1975-1985 թթ. ընթացքում երկրի պետական բյուջեի դեֆիցիտը միջինը կազմում էր 5,7 %: Այս պայմաններում Կիպրոսն իսկական տնտեսական վերելք արարեց: 1975 թ. ճգնաժամի հաղթահարման նպատակով մշակվեց տնտեսական գործունեության երկամյա արտակարգ ծրագիր, և ևս երկուսն էլ հաջորդաբար ընդունվեցին հետագայում: Ծրագրի նպատակն էր պայմաններ ստեղծել ինչպես ինքնաբավ տնտեսական զարգացման, այնպես էլ տնտեսության զարգացման նախաճգնաժամային մակարդակի նվաճման համար: Վերջինս ենթադրվում էր իրականացնել Կիպրոսի վերահսկողության ներքո գտնվող տարածքներում առկա ռեսուրսների ակտիվ և ռացիոնալ օգտագործման միջոցով: ***Հիմնական խնդիրներն էին սոցիալական ապահովությունը և փախստականների վերաբնակեցումը, զբաղվածության ապահովումը, արտադրության վերականգնումը և ներդրումների ներգրավումը:*** Երկրի ռեսուրսների որոշակի մասն ուղղված էին Լիմասոլի և Լառնակայի նավահանգիստների արդիականացմանը, ինչպես նաև նոր միջազգային օդանավակայանի կառուցմանը: Այս պարագայում մեծապես կարևորվում էր նաև արտաքին ֆինանսական օգնությունը: 1975-1985 թթ. ընթացքում Կիպրոսի տնտեսությանն աջակցելու նպատակով Հունաստանը տրամադրել էր 126 մլն կիպրական ֆունտ, իսկ ԱՄՆ-ը՝ 45 մլն ֆունտ: Արդյունքում 1977-ին գործազրկությունը նվազեց մինչև 3.1 %, ձևավորվեցին նոր տնտեսական հարաբերություններ Մերձավոր Արևելքի երկրների

հետ, որոնց շուկաները հենց այդ ժամանակ էին սկսում ակտիվորեն զարգանալ: Միաժամանակ ***կիպրոսցիները սկսեցին նաև ակտիվորեն մեկնել արտասահման: 1976-1985 թթ. ընթացքում կիպրոսցի արտագաղթողներն, ընդհանուր առմամբ, 255 մլն ֆունտ նվիրաբերեցին իրենց հայրենիքին,*** այսինքն՝ ավելին, քան ԱՄՆ-ն ու Հունաստանը միասին վերցրած: 1978 թ. զբոսաշրջության ոլորտը վերադարձավ 1973 թ. մակարդակին, իսկ ՀՆԱ-ի միջին աճը հասավ 15 %-ի:

Նկատենք նաև, որ 2007-2012 թվականներին, երբ եվրոպական մի շարք երկրներ գտնվում էին տնտեսական ճգնաժամի փուլում, Կիպրոսը դիմակայեց. գործնականում տեղի չունեցավ էական անկում, որն առկա էր եվրոգոտու ողջ տարածքում: Տնտեսական աճի առումով Կիպրոսը մեծամասամբ գերազանցեց ԵՄ մյուս անդամներին[1]: Սակայն ճգնաժամն, այնուամենայնիվ, չշրջանցեց կղզին: 2012-2013 թվականները դժվարին դարձան Կիպրոսի համար՝ հիմնականում Հունաստանի պարտքային ճգնաժամի պատճառով: Ի վերջո, միակ ելքը 2013-ին Եվրախմբի, Եվրահանձնաժողովի, Եվրոպական կենտրոնական բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի 10 մլրդ եվրոյի չափով ֆինանսական օգնության ընդունումն էր: Իսկ երեք տարի անց՝ 2016 թ., ֆինանսական խնայողության կոշտ միջոցների, բարեփոխումների և սեփականաշնորհման ծրագրերի շնորհիվ Կիպրոսին հաջողվեց սահմանված ժամկետներից շուտ լքել ֆինանսական աջակցության ծրագիրը՝ չօգտագործելով տրամադրված գումարի 30 %-ը: Հակառակ բոլոր կանխատեսումներին՝ Կիպրոսին հաջողվեց կասեցնել տնտեսական անկումը և կանխատեսված ժամկետից մեկ տարի առաջ վերադառնալ տնտեսական զարգացման ընթացքին:

2018 թվականին Կիպրոսի տնտեսությունը աճեց ցնցող 4,2 %-ով: Կիպրոսի տնտեսության վերականգնմանը մեծապես նպաստում են Կիպրոսի ներդրումային ծրագիրը և Կիպրոսում մշտական կացության թույլտվությունը, որոնք ապահովում են ներդրումների զգալի ներհոսք՝ երաշխավորելով ներդրողների քաղաքացիությունը կամ կացության թույլտվությունը, որը տարածվում է նաև նրանց ընտանիքի անդամների վրա: Այս մոտեցմամբ Կիպրոսը հերթական անգամ ապացուցեց ցանկացած դժվարությունների դիմակայելու իր ունակությունը: Ներկայում, ինչպես և նախկինում, տեղական և օտարերկրյա ներդրողներն ու ձեռնարկատերերը ըստ արժանվույն են գնահատում Կիպրոսի մեղմ կլիման, ռազմավարական դիրքը և Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի և Հյուսիսային Աֆրիկայի միջև որպես կամուրջ ծառայելու հնարավորությունը: 2004-ին ամրապնդելով իր դիրքերը նաև ԵՄ-ին անդամակցության միջոցով՝ Կիպրոսը վերականգնեց առողջ տնտեսական հեռանկարներ և ներդրումային մեծ ներուժ ունեցող երկրի համբավը: Նշենք նաև, որ 2020-ին 2019 թ. համեմատությամբ Կիպրոսի համախառն պետական պարտքն

[1] Сила экономики Кипра – прошлое, настоящее и будущее, https://www.skyprimegroup.com/ru/the-power-of-the-cyprus-economy-past-present-future/

աճել է 25.70 %-ով, մինչդեռ 2019-ին 2018 թ. համեմատությամբ այս ցուցանիշը նվազել էր 5.18 %-ով[1]: Հասկանալի է, որ 2020-ին պետական պարտքի արձանագրված աճը մեծապես պայմանավորված է Covid-19 համավարակով: Ստորև ներկայացնենք նաև Կիպրոսի հիմնական տնտեսական ցուցանիշները (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Կիպրոսի հիմնական տնտեսական ցուցանիշները (2014-2020 թթ.)[2]

Անվանումը	2014 թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.	2019 թ.	2020 թ.
ՀՆԱ-ի աճը, %	-1.8	3.2	6.4	5.2	5.2	3.1	-5.1
Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, դոլար	26995	23429	24693	26580	29300	28488	27054
Գործազրկության մակարդակը, %	16.1	14.9	13.0	11.1	8.4	7.1	7.6
Արտահանումը, մլն դոլար	15267.6	13904.5	14781.7	16794.7	19024.5	17921.5	16100.1
Միջազգային տուրիզմից եկամուտները, մլն դոլար	2924.0	2525.6	2870.0	3274.0	3449.0	3245.0	-
Համախառն պետական պարտք, մլն դոլար	19000	19000	20000	19000	21000	21000	25000

Աղյուսակ 1-ի տվյալներից երևում է, որ Կիպրոսի հիմնական տնտեսական ցուցանիշները ենթարկվել են որոշակի փոփոխությունների: Մասնավորապես՝ 2015-2018 թթ. ընթացքում նկատվել ՀՆԱ-ի ցուցանիշի որոշակի բարելավում, այնուհետև 2020-ին՝ կտրուկ վատթարացում՝ մինչև -5.1 %: Սակայն 2020-ին 2014 թ. համեմատությամբ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ավելացել է 59 դոլարով, գործազրկության մակարդակը նվազել է 8.5 տոկոսային կետով, արտահանման ծավալներն ավելացել են 832.5 մլն դոլարով: 2019-ին 2014 թ. համեմատությամբ միջազգային տուրիզմից ստացված եկամուտներն ավելացել են 321 մլն դոլարով: Նույն ժամանակահատվածում պետական պարտքն ավելացել է 6 մլրդ դոլարով: Նկատենք նաև, որ Կիպրոսը նույնպես անմասն չմնաց վերջին տարիների ճգնաժամերի առաջացրած հիմնախնդիրներից, որոնք էլ իրենց էական ազդեցությունն ունեցան երկրի տնտեսական աճի ցուցանիշի վրա:

Կիպրոսը 2020 թ. զբաղեցրել է 48-րդ տեղը Bloomberg նորարարության համաթվում[3]: Այս համաթիվը երկրները գնահատում է 7 չափանիշներով՝ նեռարոյալ հետազոտությունների և մշակումների ծախսերը, ինչպես նաև բարձր տեխնոլոգիական ոլորտին պատկանող պետական ընկերությունների թիվը:

[1] Кипр, https://knoema.ru/atlas/Кипр

[2] Кипр, https://knoema.ru/atlas/Кипр

[3] Рейтинг инновационных экономик – 2020: на первое место вышла Германия, https://theworldonly.org/rejting-innovatsionnyh-ekonomik-2020/

2020 թ. բիզնեսի վարման դյուրինությունը բնութագրող Համաշխարհային բանկի Doing Business-ի վարկանիշում Կիպրոսը զբաղեցրել է 54-րդ տեղը[1]:

Հայաստանի Հանրապետությունում ընթացող ներկայիս զարգացումները հիմք են տալիս պնդելու, որ Կիպրոսի տնտեսության զարգացման առաջավոր փորձի կիրառումը (հատկապես 1975-1985 թթ.) կարող է մեծապես նպաստել ՀՀ տնտեսության ճգնաժամային իրավիճակների հաղթահարմանը, ինչպես նաև նախադրյալներ ստեղծել տնտեսության հետագա բնականոն զարգացման համար:

Գիտական նորույթը

Կիպրոսի տնտեսության զարգացման փորձի կիրառման արդյունքում պետական-մասնավոր համագործակցության ակտիվացումը, ընկերություններին հարկային, մաքսային և վարկային արտոնությունների տրամադրումը, բարձր տեխնոլոգիական ոլորտի արտադրանքների արտահանման (վաճառահանման) և փոխանակման համար բարենպաստ պայմանների ստեղծումը, ընկերությունների ինովացիոն զարգացման խթանումը, հայրենական և օտարերկրյա ներդրողների համար կապիտալի ներդրման հավասար և գրավիչ պայմանների ապահովումը, թեթև, սննդի և վերամշակող արդյունաբերության ոլորտներում լրացուցիչ ներդրումների իրականացման միջոցով նոր աշխատատեղերի ստեղծումը, բնակարանաշինության և բնակարանային ապահովության աշխատանքներում շահառուների ակտիվ ներգրավումը (զբաղվածության ապահովման և շինարարական աշխատանքների տևողության կրճատման նպատակով), բնակչության կենսամակարդակի բարելավմանը և տնտեսության համաչափ զարգացմանն ուղղված տնտեսական զարգացման և սոցիալական քաղաքականության փոխհամաձայնեցված ներդաշնակ մոդելի մշակումը և կիրառումը մեծապես կարող են նպաստել ՀՀ տնտեսության համաչափ զարգացմանը:

Եզրակացություններ

Ինչպես հայտնի է, Հայաստանը և Կիպրոսն ունեն պատմական, աշխարհաքաղաքական և մշակութային որոշակի ընդհանրություններ, ինչի շնորհիվ երկու երկրների միջև բարեկամական և համագործակցական կապերի խորացումն ու ամրապնդումը լուրջ ջանքերի գործադրում չի պահանջում: Հատկապես այն պարագայում, երբ կիպրոսցիները 1974 թ., իսկ հայերը ներկայում հայտնվել են միևնույն ճգնաժամային իրավիճակում՝ թուրքական ներխուժման արդյունքում: Հետևաբար Կիպրոսում իրականացված հակաճգնաժամային միջոցառումները ամբողջությամբ կիրառելի են նաև Հայաստա-

[1] Опубликован рейтинг Doing business 2020: Грузия обогнала Великобританию, Норвегию и Швецию, https://internationalinvestment.biz/business/1475-opeblikovan-reyting-doing-business-2020-gruziya-obognala-velikobritaniyu-norvegiyu-i-shveciyu.html

նում։ Ինչպես 1974-ին Կիպրոսում, այնպես էլ ներկայում Հայաստանում կարևորագույն խնդիրների շարքին են դասվում սոցիալական ապահովությունը և փախստականների վերաբնակեցումը, զբաղվածության ապահովումը, արտադրության վերականգնումը և ներդրումների ներգրավումը, որոնց արդյունավետ հաղթահարումը հնարավոր է պետական ֆինանսական ռեսուրսների և Սփյուռքի ներուժի ճիշտ համախմբման միջոցով։ Ստեղծված իրավիճակը ենթադրում է նաև Կիպրոսի հետ Հայաստանի համագործակցային կապերի խորացում՝ տեղեկատվության փոխանակման և փոխշահավետ գործարար կապերի ձևավորման նպատակով։ Հայաստանը կարող է փոխշահավետ պայմաններով Կիպրոսին փոխանցել բարձր տեխնոլոգիական ոլորտի արտադրանքներ՝ նախատեսված անհատական օգտագործման և արտադրական գործընթացներում ներդրման համար, ինչպես նաև տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ, հայկական մրգեր և հյութեր, մատուցել տարբեր մասնագիտություններով և մակարդակի կրթական ծառայություններ, իսկ Կիպրոսից՝ ներմուծել մի շարք արտադրանքներ, առաջին հերթին ցիտրուսային մրգեր և տեքստիլ (թուրքական արտադրանքների ներմուծումից հրաժարվելու նպատակով)։ Հայ-կիպրոսական համագործակցության ընդլայնման հավանական ոլորտներից է նաև տուրիզմը, որտեղ նույնպես օգտակար կլինի կուտակած փորձի փոխանակումը։

Հաշվի առնելով Կիպրոսի տնտեսության զարգացման ներկայացված փորձը՝ կարող ենք առաջարկել ՀՀ տնտեսական վիճակի բարելավման հետևյալ ուղիները.

- պետական-մասնավոր համագործակցության ակտիվացում՝ ունեցած ներուժի համատեղ և արդյունավետ օգտագործման նպատակով։
- Ինովացիոն և ներդրումային գործունեության խթանման նպատակով ընկերություններին հարկային, մաքսային և վարկային արտոնությունների տրամադրում։
- Բարձր տեխնոլոգիական ոլորտի արտադրանքների արտահանման (վաճառահանման) և փոխանակման համար բարենպաստ պայմանների ստեղծում, ինչպես նաև ընկերությունների ինովացիոն զարգացման խթանում՝ բարձր տեխնոլոգիական ոլորտի արտադրանքների և տեխնոլոգիական լուծումների օգտագործման շեշտադրմամբ։
- Հայրենական և օտարերկրյա ներդրողների համար կապիտալի ներդրման հավասար և գրավիչ պայմանների ապահովում, կասկածելի կամ ոչ բարեկամական երկրների կապիտալների ներդրման գործընթացների կասեցում կամ խիստ վերահսկողություն։
- Սոցիալապես անապահով քաղաքացիների զբաղվածության ապահովման և մասնագիտական վերապատրաստման գործընթացներում Կիպրոսի առաջավոր փորձի կիրառում՝ թեթև, սննդի և վերամշակող արդյունաբերության ոլորտներում լրացուցիչ ներդրումների իրականացման միջոցով

նոր աշխատատեղերի ստեղծում և դրանց համալրում:

- Բնակարանաշինության և բնակարանային ապահովության աշխատանքներում շահառուների ակտիվ ներգրավում՝ զբաղվածության ապահովման և շինարարական աշխատանքների տնողության կրճատման նպատակով:
- Բնակչության կենսամակարդակի բարելավմանը և տնտեսության համաչափ զարգացմանն ուղղված տնտեսական զարգացման և սոցիալական քաղաքականության փոխհամաձայնեցված ներդաշնակ մոդելի մշակում և կիրառում:

Ամփոփելով՝ անհրաժեշտ է նշել, որ Կիպրոսի տնտեսության զարգացման փորձի և հոդվածում ներկայացված գործնական առաջարկությունների կիրառումը կարող է նպաստել ՀՀ տնտեսության զարգացմանը, ընկերությունների ներդրումային ակտիվության աճին, արտահանման ծավալների ավելացմանը, բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը, ինչպես նաև միջազգային տնտեսական համագործակցության խորացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. История переговорного процесса об объединении Кипра, https://tass.ru/info/2247300
2. Квашнин Ю.Д., Банковский кризис в республике Кипр // Год планеты. 2013. Ежегодник, с. 305-315
3. Квашнин Ю.Д., Республика Кипр как перевалочная база для иностранного капитала, Контуры глобальных трансформаций: политика, экономика, право, 2018, том 11 (1) , стр. 170- 184
4. Кипр, https://knoema.ru/atlas/Кипр
5. Кипр / Участие в международных организациях, основные внешнеполитические контрагенты и партнёры, отношения с Россией, http://www.hyno.ru/tom1/876.html
6. Кипр: экономическое чудо после событий 1974 года, https://www.cyprusrussianbusiness.com/index.php/articles/5283-kipr-ekonomicheskoe-chudo-posle-sobytij-1974-goda
7. Опубликован рейтинг Doing Business 2020: Грузия обогнала Великобританию, Норвегию и Швецию, https://internationalinvestment.biz/business/1475-opeblikovan-reyting-doing-business-2020-gruziya-obognala-velikobritaniyu-norvegiyu-i-shveciyu.html
8. Рейтинг инновационных экономик – 2020: на первое место вышла Германия, https://theworldonly.org/rejting-innovatsionnyh-ekonomik-2020/
9. Сила экономики Кипра – прошлое, настоящее и будущее, https://www.skyprimegroup.com/ru/the-power-of-the-cyprus-economy-past-present-future/
10. Экономика Кипра: промышленность, сельское хозяйство, торговля, http://www.gecont.ru/articles/econ/ciprus.htm

References

1. Istorija peregovornogo processa ob ob"edinenii Kipra, https://tass.ru/info/2247300
2. Kvashnin Ju.D., Bankovskij krizis v respublike Kipr // God planety. 2013. Ezhegodnik, s. 305-315
3. Kvashnin Ju.D., Respublika Kipr kak perevalochnaja baza dlja inostrannogo kapitala, Kontury global'nyh transformacij: politika, jekonomika, pravo, 2018, tom 11 (1) , str. 170- 184
4. Kipr, https://knoema.ru/atlas/Kipr
5. Kipr / Uchastie v mezhdunarodnyh organizacijah, osnovnye vneshnepoliticheskie kontragenty i partnjory, otnoshenija s Rossiej, http://www.hyno.ru/tom1/876.html
6. Kipr: jekonomicheskoe chudo posle sobytij 1974 goda, https://www.cyprusrussianbusiness.com/index.php/articles/5283-kipr-ekonomicheskoe-chudo-posle-sobytij-1974-goda
7. Opublikovan rejting Doing Business 2020: Gruzija obognala Velikobritaniju, Norvegiju i Shveciju, https://internationalinvestment.biz/business/1475-opeblikovan-reyting-doing-business-2020-gruziya-obognala-velikobritaniyu-norvegiyu-i-shveciyu.html
8. Rejting innovacionnyh jekonomik – 2020: na pervoe mesto vyshla Germanija, https://theworldonly.org/rejting-innovatsionnyh-ekonomik-2020/
9. Sila jekonomiki Kipra – proshloe, nastojashhee i budushhee, https://www.skyprimegroup.com/ru/the-power-of-the-cyprus-economy-past-present-future/
10. Jekonomika Kipra: promyshlennost', sel'skoe hozjajstvo, torgovlja, http://www.gecont.ru/articles/econ/ciprus.htm

ԿԻՊՐՈՍԻ ՎԵՐԵԼՔԻ ՈՒՂԻՆ

ԱՐՄԻՆԵ ԶԱԽԱՐՅԱՆ

Համառոտագիր: Ժամանակակից տնտեսական պայմաններում Հայաստանի Հանրապետության համար հատկապես կարևորվում է արտասահմանյան երկրների տնտեսությունների զարգացման առաջավոր փորձի ուսումնասիրությունն ու արդյունավետ կիրառումը: Հատուկ ուշադրության է արժանի այն երկրների փորձը, որոնք պատմական, աշխարհաքաղաքական և մշակութային տեսանկյուններից որոշակի ընդհանրություններ ունեն մեր երկրի հետ: Այս համատեքստում որոշակիորեն կարևորվում է Կիպրոսի տնտեսության զարգացման փորձի ուսումնասիրությունը, ինչն էլ պայմանավորում է մեր հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակն է Կիպրոսի տնտեսական փորձի ուսումնասիրության միջոցով Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման

ներուժի արդյունավետ կիրառման եղանակների բացահայտումը: Հետազոտության խնդիրն է Կիպրոսի տնտեսության զարգացման մեխանիզմների վերլուծության արդյունքների հիման վրա ՀՀ տնտեսության զարգացման հնարավոր ուղիների մշակումը:

Հետազոտությունների ընթացքում կիրառվել են համակարգային և իրավիճակային վերլուծության, տնտեսավիճակագրական խմբավորումների, ինդուկցիայի և դեդուկցիայի, համեմատական և գործոնային վերլուծությունների, գիտական աբստրահման մեթոդները:

Գիտական նորույթը: Կիպրոսի տնտեսության զարգացման փորձի կիրառման արդյունքում պետական-մասնավոր համագործակցության ակտիվացումը, ընկերություններին հարկային, մաքսային և վարկային արտոնությունների տրամադրումը, բարձր տեխնոլոգիական ոլորտի արտադրանքների արտահանման (վաճառահանման) և փոխանակման համար բարենպաստ պայմանների ստեղծումը, ընկերությունների ինովացիոն զարգացման խթանումը, հայրենական և օտարերկրյա ներդրողների համար կապիտալի ներդրման հավասար և գրավիչ պայմանների ապահովումը, թեթև, սննդի և վերամշակող արդյունաբերության ոլորտներում լրացուցիչ ներդրումների իրականացման միջոցով նոր աշխատատեղերի ստեղծումը, բնակարանաշինության և բնակարանային ապահովության աշխատանքներում շահառուների ակտիվ ներգրավումը (զբաղվածության ապահովման և շինարարական աշխատանքների տնողության կրճատման նպատակով), բնակչության կենսամակարդակի բարելավմանը և տնտեսության համաչափ զարգացմանն ուղղված տնտեսական զարգացման և սոցիալական քաղաքականության փոխհամաձայնեցված ներդաշնակ մոդելի մշակումը և կիրառումը մեծապես կարող են նպաստել ՀՀ տնտեսության համաչափ զարգացմանը:

Բանալի բառեր՝ պետական կառավարում, տնտեսություն, զարգացում, պետական աջակցություն, ներդրումներ, խթանում, ֆինանսավորում, արդյունավետություն

ПУТЬ ВОЗВЫШЕНИЯ КИПРА

АРМИНЕ ЗАХАРЯН

Аннотация. В современных экономических условиях для Республики Армения особенно важно изучение и эффективное применение передового опыта развития экономик зарубежных стран. Особого внимания заслуживает опыт стран, имеющих определенное сходство с нашей страной с исторической, геополитической и культурной точек зрения. В данном контексте в определенной степени важно изучение опыта развития экономики Кипра, что определяет актуальность темы нашего исследования.

Целью исследования является выявление способов эффективного использования потенциала экономического развития Республики Армения посредством изучения экономического опыта Кипра. Задачей исследования является разработка возможных путей развития экономики Республики Армения на основе результатов анализа

механизмов развития экономики Кипра.

В ходе исследования использовались методы системно-ситуационного анализа, экономико-статистических группировок, индукции и дедукции, сравнительного и факторного анализа, научной абстракции.

Научная новизна. Активизация государственно-частного сотрудничества; предоставление компаниям налоговых, таможенных и кредитных льгот; создание благоприятных условий для экспорта (продажи) и обмена высокотехнологичной продукцией; стимулирование инновационного развития компаний, обеспечение равных и привлекательных условий инвестирования капитала для отечественных и иностранных инвесторов; создание новых рабочих мест в сфере легкой, пищевой и перерабатывающей промышленности за счет дополнительных инвестиций; активное вовлечение заинтересованных сторон в жилищное строительство и обеспечение (с целью обеспечения занятости и сокращения длительности строительных работ); разработка и применение взаимосогласованной гармоничной модели экономического развития и социальной политики (направленной на повышение уровня жизни населения и сбалансированное экономическое развитие) в результате использования опыта развития экономики Кипра могут значительно способствовать сбалансированнму развитию экономики Республики Армения.

***Ключевые слова*:** государственное управление, экономика, развитие, государственная поддержка, инвестиции, стимулирование, финансирование, эффективность

THE ROAD OF THE RISE OF CYPRUS

ARMINE ZAKHARYAN

Abstract. In the current economic conditions, it is especially important for the Republic of Armenia to study and effectively apply the advanced experience in the development of the economies of foreign countries. The experience of countries that have a certain similarity with our country from a historical, geopolitical and cultural point of view deserves special attention. In this context, to a certain extent, it is important to study the experience of the development of the Cyprus economy, which determines the relevance of the topic of our research.

The aim of the study is to identify ways to effectively use the potential of economic development of the Republic of Armenia by studying the economic experience of Cyprus. The tasks of the study are to develop possible ways of developing the economy of the Republic of Armenia, based on the results of the analysis of the mechanisms for the development of the economy of Cyprus.

The study used the methods of system-situational analysis, economic and statistical groupings, induction and deduction, comparative and factor analysis, scientific abstraction.

Scientific novelty. Enhancing public-private cooperation; providing companies with tax, customs and credit benefits; creation of favorable conditions for export (sale) and exchange of high-tech products; stimulating the innovative development of companies, ensuring equal and attractive conditions for capital investment for domestic and foreign investors; creation of new jobs in the light, food and processing industries through additional investment; active involvement of stakeholders in housing construction and

provision (in order to ensure employment and reduce the duration of construction work); the development and application of a mutually agreed harmonious model of economic development and social policy (aimed at improving the living standards of the population and balanced economic development) as a result of using the experience of developing the Cyprus economy can significantly contribute to the balanced development of the economy of the Republic of Armenia.

Keywords: public administration, economy, development, government support, investment, stimulation, financing, efficiency